17. ԱՎՋԻ ԱՀՄԱԴ

Ավջի Ահմադ օր մե խազալ մե կը զարկե, սիրտ քյաբաբ գուզե, կրակ կը վառե, զսիրտ կէնե քյաբաբ օր կուտե, կը տեսնա՝ օձ մե ուր ծկեն գելնա, ծկու բոլոր խազ մե կը քաշե ու կէրթա։ Քիչ մե կը մնա, սև մուռտալ օձ մե գիկա կանի խազի մոտ, կը կրկճա, ծկուց խորտիկ շեկ օձ մե գելնա, կէղնի գունդ ու կծիկ, կը թռնա զխազ գընցնա, կէրթա սև օձու մոտ, կը փաթվին ֆիրար, կը լկտրվին, քեֆ կէնին։ Ավջի Ահմադի խիրեն խաբուլ չէնե, կը վերու զթվանկ ու ա՛ռ հա կը զարկե, հրտ զարկելուն սև օձու պոչ կը կտրի, կը թողե փախնի, շեկ օձ լե կը բրնգրի, կը փախնի մտնա ծակ։ Ավջի Ահմադ կը շալկե զուր նեճիր, կը դառնա տուն, ինչ օր տեսեր էր՝ ուր կնկան խսա կէնե։

Լուսումթին էրկու զավթիա գիկան, կանին դուռ, կըսին.

— Ավջի՛ Ահմադ, ֆելի էրթանք, մեր թագավոր զքըզի կը կանչե։

— Ջա՛նըմ,— կըսե,— թագավոր իմ հետ ի՞նչ գործ ունի։ Ես ավջի մարդ իմ, հարի ֆիրկուն սար ու ձոր կը զվռնիմ, կը դառնամ՝ գիկամ իմ տուն, թագավորն իմ հետ ի՞նչ ալիշվերիշ ունի։

— Չէ՛, իլայի պտի գաս, թե չիգաս՝ հմալ բան կը հանինք քու գլուխ, օր զքու գլուխ մոլրիս։

Կնիկ կըսե.

— Ս՛ադ, գնա՛, քաջանց թագավորն է զքըզի կանչի. բան է, թե ըսեց. «Յուղե՞ օր տամ», դու բան չուզի՞ս, մինակ ըսե. «Զքու ակութմատ մտու իմ բերան ու հանեմ»։

Զավթիկք կառնին զԱվջի Ահմադն ու կէրթան, կէրթան՝ նադեհան դուռ մե կը բացվի, կը մտնան ներս, կը տեսնա օր ի՞նչ, բոլոր անհեսար ու անքթաբ օձեր կանուկ կիշկին թագավորի բերան։

— Հողածի՛ն,— կըսե թագավոր,— դու ի՞մալ շասարաթ էրիր՝ ղթագավորի կնիկ բրինդրեցիր։

Ավջի Ահմադ կըսե.

— Թագավոր ապրած կէնա, ես յո՞ւր, թագավորի կնիկն յո՞ւր, ես ե՞ր իմ հմալ բան էրի։

Թագավոր կըսե.

— Դու ավջի մարդ իս, յերեկ ի՞նչ իս տեսի, ի՞նչ իս էրի։

— Թագավոր ապրած կենա,— կըսե ավջին,— յերեկ ես խաղալ մե ղարկի, սիրտսի քյաբաբ յուղեց, կրակ էրի, քյաբաբ շինեցի, օր ուտենք՝ տեսա օձ մե ղուր գլուխ հանեց դուս, թռավ ուր ծըկեն, ծկու բոլոր կլոր խաղ մե քաշեց ու թողեց գնաց։ Փշու մե մնաց, մուռտալ սև օձ մե էկավ կանավ ծըկու մոտ, կրկճաց, հըտ կրկճալուն՝ խորոտյկ շեկ օձ մե զգլուխ հանեց դուս, կտոտվավ, էղավ գունդ ու կծիկ, թռավ զխազ յընցավ, ինք ու սև օձ փաթվան յիրար, լկտըվան, քնֆ էրին. իմ խիրեն խաբուլ չէրեց, թվանկ մե թողեցի, սև օձուս պոչ կտրավ, թողեց փախավ, շեկ օձ լե բրինդրավ, փախավ մտավ ի ծակ։ Հշտե իդա խըդար բան, էլ յուրիշ բան չըմ էրերի։

— Մկա օր զէն օձ բերին զառջևդի, կը ճանչնա՞ս։

— Էմր էրե, թըղ յիգա, բալքի ճանչնամ։

Թագավոր էմր կէնե, օձեր յըմեն գելնան դուս ու կառնին կրկճալ. օր կը կրկճան՝ էլ ախշար օձ չը մնա, օր գիկան Ավջի Ահմադի յառջևով գընցնան, սև օձ չկա։

Օձ մե թագավորին խաբար կիտա, թե ֆլան տեղ ֆլան սլառվու տղեն չէկեր է։ Թագավոր էմր կէնե, օր էրթան բերին։ Կէրթան, տեսնան, օր օղորդման պառվու տղի պոչ կտրուկ՝ մըջ ջլերուն պարկուվ, կը տքա, կը վերուն բերին, Ավջի Ահմադ հըտ տեսնելուն՝ կըսե.

— Հշտե իդա՛ է։

Թագավոր էմր կէնե, զպառվու տղեն լե, զուր կնիկ լե կիտա սպանել։ Ավջի Ահմադին կըսե.

— Դե, յուղե օր տամ, ինչ օր քու լեզուն զվեռնե՝ կիտամ։

— Թագավոր ապրած կենա,— կըսե Ավջի Ահմադ,— բան չըմ յուղի, մինակ քու ճկութ մատ դիր իմ բերան ու հանե։

6—271

— Հա՛յ քու սորվեցնողի վիզ կոտրի,— կըսե Թագավոր,— չէղնելու բան յուղեցիր, հմա օր ըսեր իմ՝ զքու խնդիրք կը կատարիմ։

Զճկուած օր կը դնե Ավշի Ահմադի բերան, աչքեր կը բացվին, ուրիշ ֆամ ու ֆարասաթ գիկա վրեն, հավքերն օր կը ճլվլան՝ զընդոնց լեզուն կը հասկընա, ծաղիկ ու ծաղկունք գելնան լեզու, մեկ կըսե. «Ես իգա հիվընդուԹենի դեղ իմ», մեկել կըսե. «Ինա հիվընդուԹենի», հեքիմներ Ավշի Ահմադից կը սորվին յըմեն դեղ ու դարման, ընդրցնե լե հեքիմուԹեն կը ցրվի ախշարք։